

## Հսկել ձեր մատակարարը

Իբրեւ գործատեր դուք պետք է վերահսկէք ձեր մատակարարը: Եթէ առաջին անգամն է, ատիկա կրնայ տհաճ ըլլալ: Ամէն պարագայի հետեւեալ տեղեկութիւնը կրնայ օգտակար ըլլալ:

### 1. Ձեր մատակարարը թող գիտնայ, թէ իւրաքանչիւր գործի ատեն ի՞նչ պետք է կատարէ:

Եթէ այնպէս թուի, որ լիազօրուած աշխատանքները անբողջացնելու բաւարար ժամանակ չկայ, դուք և ձեր մատակարարը պետք է քննարկէք, թէ ինչպէ՞ս ընէք, որ IHSS-ի լիազօրած ժամանակը լաւագոյնս գործածէք: Եթէ ձեր պարագան փոխուի, և դուք պետք ունենաք աւելի կամ պակաս ժամերու, կապ պահէք ձեր քաունթիի IHSS-ի գրասենեակին հետ:



### 2. Հաղորդէ կարիքներդ:

Ձեր մատակարարը կ'ուզէ գիտնալ իր ընելիքը, այնպէս մը որ ան կարենայ կատարել աշխատանքները ձեր նախընտրած ձևով:

- **Յստակ եղէք:** Կրցածնիդ չափ մանրամասն բացատրեցէք, թէ ինչպէս կ'ուզէք, որ ձեր մատակարարը կատարէ իւրաքանչիւր լիազօրուած աշխատանք: Նկատի ունեցէք ժամանակի քանակը, որ մատակարարը պետք ունի կատարելու այդ աշխատանքը: Ձեզի համար աւելի հանգիստ կ'ըլլայ սկսիլ տունի գործերով կամ լուացքով նախքան անձնական խնամքի պէտքերուն անցնիլը:
- **Համբերող եղէք:** Կրնաս պէտքը ունենալ յիշեցնելու մատակարարին, թէ ինչպէ՞ս կ'ուզէ որ ան մէկէ աւելի կարգ մը բաներ ընէ:
- **Յստակ եղէք:** Եթէ կ'ուզէք, որ ձեր լիազօրուած աշխատանքները կատարուին յատուկ ձևով մը, ըսէք մատակարարին:

### 3. Ակնկալիքներդ թող տրամաբանական ըլլան:

- Նոր մատակարար մը քանի մը անգամ ձեր քով աշխատելու կրնայ պէտք ունենալ, մինչև որ կարենայ հասկնալ ձեր ակնկալիքները և պէտքերը:

#### 4. Ձեր մատակարարը թող իմանայ, թե ինչպես կ'ընթանան գործերը:

- **Դրական բան մը ըստք**, եթե ան իր ընելիքները ձեր ուզած ձևով կ'ընէ:
- **Բան մը ըստք, որ չտկէք** մատակարարին ըրածը, եթե ընելիքները ձեր ուզած չ'ընէր: Քաղաքավար ձևով իրեն ըստք, թե դուք յատկապես ինչպես կ'ուզէք, որ կատարուին անոնք: Ահաւասիկ քանի մը օգտակար խորհուրդներ.
  - Ձեր ձայնին թոնը ընկերական ըլլայ:
  - Մի մեղադրէք կամ նուաստացնէք մատակարարը:
  - Մատակարարին հետ յարգանքով վարուեցէք:

#### 5. Կարևոր է, որ ձեր մատակարարէն Չպահանջէք, որ ձեզի համար չլիազօրուած կամ չարտօնուած աշխատանքներ կամ ծառայութիւններ ընէ:

Երբ ընկերային ծառայողը կը սահմանէ ձեր կարիքները, ան նաև կ'որոշէ, IHSS-ի ի՞նչ ծառայութիւններ լիազօրել ձեզի համար: Դուք ձեր մատակարարէն պէտք չէ պահանջէք, որ IHSS-ի կողմէ չլիազօրուած կամ չարտօնուած ծառայութիւններ ընէ: Եթէ օգնութեան պէտք ունիք IHSS ծրագրին կողմէ չլիազօրուած աշխատանքներու վերաբերեալ, ինչպէս ընտանի կենդանիներ խնամելը, փոստի կամ դրամական հարցեու հետ կապուած օգնութիւն, կամ ընկերային ձեռնարկներու մասնակցութիւն՝ դուք պէտք է դիմէք ընտանիքի անդամներու, բարեկամներու, եկեղեցւոյ կամաւորներու կամ այլոց օգնութեան:

#### 6. Ժամանակը լաւ օգտագործեցէք:

Իբրեւ ձեր մատակարարի գործատէրը և վերակացուն ձեր պարտականութիւնն է, որ նայիք, որ ան IHSS-ի ծառայութիւնները կատարէ սահմանուած ժամանակին մէջ: Ձեր մատակարարը, այնքան ատեն որ կը վարձատրուի իբրև IHSS-ի մատակարար, պէտք չէ ընէ որևէ այլ բան, բացի ձեզի IHSS-ի ծառայութիւններ մատուցելէ:

Ձեր մատակարարը պէտք Չէ որ.

- Անձնական հեռաձայններ ընէ
- Յեռատեսիլ դիտէ
- Ձեզի հետ կատարած այցելութեան վրայ պէտք եղածէն աւելի ժամանակ անցընէ
- Պզտիկներ կամ ուրիշ մարդիկ բերէ աշխատելու
- Իր անձնական գործերը կամ աշխատանքները ընէ

